



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Շենգավիթ բժշկական կենտրոնի
Գլխավոր տնօրեն Ա.Ուռումյան

«8» սեպտեմբերի 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԺԴ.00.12 – «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված
Գազիկ Արամի Խաչատրյանի
«Մանկական հասակում ատամների կարիեսի և նրա բարդությունների բուժման
արդյունավետության համեմատական վերլուծությունը» թեմայով թեկնածուական
ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը

Ատամների կարիեսի բարձր տարածվածությունը, երեխաների և
մեծահասակների մոտ ստոմատոլոգիական հիվանդությունները կանխելու և բերանի
խոռոչի հիգիենայի պահանջվող մակարդակը պահպանելու մոտիվացիայի
բացակայությունը, ինչպես նաև ստոմատոլոգիական օգնության նկատմամբ
ծնողների ցածր կոմպլաենտությունը չլուծված բժշկասոցիալական խնդիր են
հանդիսանում: Կարիեսի, վնասվածքի կամ ոչ կարիեսային ախտահարումների
հետևանքով ախտահարված ատամի ֆունկցիան և տեսքը վերականգնելու
ստոմատոլոգների և պացիենտների միտումը գոյություն ունի շատ տասնամյակներ
շարունակ: Սակայն դրա իրականացումը հնարավոր դարձավ միայն
ստոմատոլոգիական նյութագիտության անհրաժեշտ մակարդակի զարգացումից
հետո: Ատամի հետագա ճակատագիրը կախված է բուժման մեթոդի և թերապևտիկ

միջոցառումների ճիշտ ընտրությունից՝ պուլպայի կենսունակության պահպանումից, արմատների աճի և ձևավորման հնարավորությունից և ֆունկցիոնալ արժեքից:

Այսպիսով, կծվածքի ֆիզիոլոգիական ձևավորման և հիմնական ստոմատոլոգիական ախտահարումների կանխարգելման համար ամենակարևորը ատամների պահպանումն է զարգացման յուրաքանչյուր փուլում: Ժամանակավոր ատամները, ինչպես նաև մշտական ատամները, պահանջում են թե՛ կանխարգելիչ մոտեցումներ, թե՛ պարտադիր ժամանակին բուժում, չնայած նրանց ծառայության տևողությունը շատ ավելի կարճ է:

Հետազոտության և արդյունքների գիտական նորույթը

Գագիկ Արամի Խաչատրյանի կատարած ատենախոսական հետազոտությունն արժեքավոր գիտական աշխատանք է: Գիտական նորույթը մանրամասնելու նպատակով անհրաժեշտ է նշել հետևյալը: Հեղինակի կողմից առաջին անգամ.

Իրականացվել է դենտինի խորը ֆտորացման դենտինհերմետոզացնող հեղուկի և Գլուֆտորէդ նյութի կիրառման հեռակա արդյունքներ գնահատումը կաթնատամների և մնայուն չձևավորված արմատներով ատամների պլոմբավորման ժամանակ:

Գնահատվել է Icon համակարգի կաթնատամներում և մնայուն չձևավորված արմատներով ատամներում կիրառման հեռակա արդյունքները:

Ստացվել են մինիմալ ինվազիվ եղանակներով մշակման ժամանակ կիրառվող տարբեր պլոմբանյութերի արդյունավետության համեմատական բնութագրերը:

Ատենախոսության արդյունքների և եզրակացությունների կիրառական նշանակությունը գիտության և գործնական առողջապահության համար

Հեղինակի ստացած արդյունքները անկասկած նշանակություն ունեն բժշկական գիտության և գործնական առողջապահության համար:

ICON համակարգի և էմալ-հերմետիզացնող հեղուկի կիրառումն էմալի օջախային ապահանքայնացման բուժման ժամանակ, կանխում է կարծր

հյուսվածքներում ախտահարումների առաջացումը և հանգեցնում ատամի էմալի ռեմիներալիզացիայի գործընթացներին:

Ապացուցված է կալցիումի, սիլիցիումի և ալյումինի օքսիդների վրա հիմնված «Trioxident» նյութի օգտագործման կլինիկական արդյունավետությունը՝ ձևավորված և չձևավորված արմատներով մշտական ատամների դարձելի պոլպիտի բուժման համար, ինչը հաստատվում է ռենտգենաբանական արդյունքներով:

Հետազոտության արդյունքները ներդրված են «AKRA» ստոմատոլոգիական կենտրոնում, ինչպես նաև ԵՊԲՀ մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ուսումնական գործընթացում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունն ունի ավանդական կառուցվածք, ներկայացված է համակարգչային տպագրության 109 էջով, բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտության նյութը և մեթոդները գլխից, սեփական հետազոտության արդյունքների երկու գլուխներից, եզրակացությունից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և 143 աղբյուրներ պարունակող գրականության ցանկից, որտեղ ներգրավված են 1 հայկական, 9 ռուսական և 133 անգլալեզու հեղինակների աշխատանքներ: Աշխատանքը նկարագարովված է 5 աղյուսակով և 18 նկարով:

Հետազոտությունն կազմված է կլինիկական և լաբորատոր փուլերից: Ընդհանուր առմամբ ստոմատոլոգի ական ընդունելության ժամանակ հետազոտվել է 3-ից մինչև 17 տարեկան 172 երեխա:

Լաբորատոր փուլում օգտագործվել են տարբեր խմբերի 68 ատամներ: Ուսումնասիրության արդյունքում 6 ամիս հետո օրթոդոնտիկ բուժում անցած երեխաների մոտ մենք հայտնաբերել ենք էմալի ախտահարումների աճ՝ սպիտակ բծերի տեսքով (176 ատամներում (21.6%):

ICON-ինֆիլտրացիայով արդյունավետությունը կազմել է 96.37%, էմալի խորը ֆտորացումը Tiefenfluorid® էմալ հերմետիզացնող հեղուկով – 74.1%: «Tiefenfluorid® դենտին-հերմետիզացնող հեղուկի» կամ «Глуфторэд®» համալիրների

օգտագործմամբ խորը ֆտորացումը բարձրացնում է ատամի կարծր հյուսվածքների միներալիզացիայի մակարդակը և կարծրությունը:

Հաստատվել է, որ վիտալ պոլպոտոմիան պոլպիտի բուժման ժամանակ «Триоксидент» -ի կիրառմամբ թույլ է տալիս ավելի լավ պահպանել արմատային պոլպայի կենսունակությունը (արդյունավետությունը՝ 97.8%), BC Calcium Hydroxide-ը (Հայաստան) նույնպես ցույց է տվել դրական արդյունքներ, թեև դրանք համեմատաբար քիչ արդյունավետ էին նախորդ միջոցի համեմատ (արդյունավետությունը՝ 39.1%): Պաշտպանության ներկայացված դրույթների բովանդակությունը լիովին արտացոլում է ուսումնասիրության հիմնական արդյունքները: Ուսումնասիրության նշված նպատակն ու խնդիրները լիովին իրագործվել են:

Ընդհանուր առմամբ, աշխատանքի վերաբերյալ էական դիտողություններ չկան, և աշխատանքի արդյունքները հիմք են հանդիսանում դրա դրական գնահատման համար:

Սեղմագիրը գրված է առանց էական մեթոդաբանական սխալների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Արամի Խաչատրյանի «Մանկական հասակում ատամների կարիեսի և նրա բարդությունների բուժման արդյունավետության համեմատական վերլուծությունը» թեմայով ԺԴ .00.12 – «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական թեմայով իրականացված գիտական աշխատանք է, որում առաջարկվում են նոր մոտեցումներ, որոնց արդյունավետությունը հիմնավորվել է մի շարք հետազոտությունների արդյունքներով, կարելի է կիրառել գործնական առողջապահության և ստոմատոլոգիայի ոլորտում: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ պահանջներին, իսկ ինքը՝ հեղինակը, արժանի է հայցվող կոչմանը:

Աշխատանքը քննակրվել և հավանության է արժանացել «Շենգավիթ» Բժշկական
Կենտրոնի դիմաձևոտային վիրաբուժության և ՔԿԱ հիվանդությունների
բաժանմունքի 2025թ. սեպտեմբերի 8-ի գիտական խորհրդի նիստում
(արձանագրություն թիվ 731/1):

Նիստի նախագահ՝ «Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն՝ Բ.Գ.Թ.,
դոց. Դ.Ա.Մխիթարյան:

Ներկա էին՝ Բ.Գ.Թ., դոց. Ռ.Վարդանյանը, Բ.Գ.Թ., դոց. Ս.Շահբազյանը, Բ.Գ.Թ., դոց.
Գ.Ռ.Քոչարյանը, Բ.Գ.Թ., դոց. Ա.Ամրոյանը, Վ.Ավետյանը, Լ.Լ.Գասպարյանը,
Ի.Գ.Ռաֆայելովան, Գ.Շահսուվարյանը:

Նիստի նախագահ՝

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն, Բ.Գ.Թ., դոց. Դ.Ա.Մխիթարյան

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի գործադիր տնօրեն, Բ.Գ.Թ., դոց.

Դ.Ա.Մխիթարյանի ստորագրությունը հավաստում եմ

«Շենգավիթ» Բժշկական Կենտրոնի կադրերի բաժնի պետ Շ.Սկրոջյան

